

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես
մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և
դաստիարակությունը դպրոցում:

Առարկան՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Սահրադյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ. 45 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն էջ 3-4

Մաս 1 Գլոբալ էկոլոգիական խնդիրներ էջ 5-7

Մաս 2 Ինչ է բնության պահպանությունը: Միջազգային
բնապահպանական պայմանագրեր էջ 8-10

Մաս 3 Էկոլոգիական իրավիճակը Հայաստանում: ՀՀ բնության
հատուկ պահպանվող տարածքներ: էջ 11-14

Մաս 4 Սևանա լճի հիմնախնդիրը էջ 15-18

Մաս 5 Էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը էջ 19-22

Եզրակացություններ էջ 23

Օգտագործված գրականություն էջ 24

Ներածություն

Մահատմա Գանդին ասել է « Աշխարհը բավականաչափ մեծ է՝ ցանկացած մարդու կարիքները բավարարելու համար, բայց չափազանց փոքր է, որ բավարարի մարդկային ազահությունը:»

Հավանաբար մարդկային ազահությունը հանդիսացավ պատճառ, որ բնապահպանական խնդիրները այսչափ կարևոր, գլխավոր հիմնախնդիր դարձան մարդկության համար:

Տալով հարցեր, կաշխատեմ հնարավորինս ներկայացնել նաև պատասխանները:

Իմ հիմնական հարցն է՝ ինչպես փոխել մարդու սպառողի մտածելակերպը բնության նկատմամբ, ինչ ուղիներով փոխել մարդու գործելակերպը բնության պահպանության և ռեսուրսների օգտագործման գործում: Այս հարցերից բխող ենթահարցն է՝ արդյոք կան ուղիներ ու միջոցներ, որոնք կարգելակեն առկա կործանարանար միտումները բնության հետ գոյակցելիս:

Հետազոտողական աշխատանքիս նպատակն է՝

1. Փորձել ծանոթացնել թե մեր երկրում, թե աշխարհում բնության մեջ տեղի ունեցող երևույթներին, շրջակա միջավայրին սպառնացող վտանգներին:
2. Փոխել մարդու սպառողի մտածելակերպը, փոխել նաև մարդու գործելակերպը, պատերազմել ոչ թե բնության դեմ, այլ հանուն բնության:
3. Յուրաքանչյուր մարդու ուժերի չափով բնությունն անխաթար և անաղարտ պահել առողջ կյանքի պայմաններ ստեղծելու համար:

Ավարտեմ ներածությունը Վոլֆգանգ Գյոթեի խոսքերով.« Բնությունը կատակներ չի ընդունում, նա միշտ ճշմարտացի է, մշտապես լուրջ, մշտապես

Խիստ, նա միշտ արդարացի է, իսկ սխալմունքներն ու մոլորությունները
բխում են մարդկանցից:»



Մաս 1. Գլոբալ էկոլոգիական խնդիրներ

Սարսափելի է հնչում էկոլոգիական աղետ բառակապակցությունը: Երկիր մոլորակի համար էկոլոգիական աղետը միջուկային պատերազմից հետո ամենահրեշավոր սպառնալիքներից է: Մարդկությունը ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ, բայց էկոլոգիան և մարկանց առողջությունը առաջնահերթ կարևորագույն խնդիրներից են: Բնապահպանություն միջոցով մարդիկ փորձում են ուղղել տասնամյակներով թույլ տված սխալները, շտկել բացթողումները, փրկել շրջակա միջավայրը: Մարդը բնությունից է ստանում իր գոյության համար անհրաժեշտ ռեսուրսները՝ սնունդը, մաքուր ջուրը, մաքուր օդը, էներգիան, որոնք կոչվում են էկոհամակարգային ծառայություններ: Բնապահպանական խնդիրները լուծելիս անհրաժեշտ է բոլոր երկրների, կառավարությունների, համայնքների և անհատների մասնակցությունը: Անհատի ձևավոնումը սկսվում է հիմնականում դպրոցից, ուստի հսկայական է մանկավարժի դերը երեխայի էկոլոգիական դաստիարակության պրոցեսում, այստեղից հետևություն, որ էկոլոգիական դաստիարակությունը խիստ կարևոր է դպրոցում հատկապես կենսաբանության, բնագիտության, աշխարհագրության ծրագրերի շրջանակներում և ծրագրերից դուրս:

Համաշխարհային զարգացման պատմական փորձը ցույց է տվել, որ չկա հասարակական- քաղաքական այնպիսի համակարգ, որն ինքնին երաշխավորի անաղարտ բնական միջավայր ու էկոլոգիական բարեկեցություն: Ոչ կապիտալիզմը՝ իր օգտապաշտությամբ և դաժան մրցակցությամբ, ոչ էլ սոցիալիզմը՝ իր կենտրոնամետ ու կոշտ

բյուրոկրատական կառուցվածքով, չխուսափեցին ինդուստրացման հարուցած էկոլոգիական ճգնաժամից: Էկոլոգիական աղետը սահմաններ չի ճանաչում:

Մարդիկ վերցնում են շրջակա միջավայրից տասնյակ միլիարդ տոննա նյութեր, վերադարձնելով միջավայր միլիարդավոր տոննա տարատեսակ թափոններ, որոնք աղտոտում են օդը, ջուրը և հողը: Վառելանյութերի այրումից անջատված ածխաթթու գազը հասնում է ահռելի չափերի, ստաղծելով ջերմոցային էֆեկտ, գլոբալ տաքացում իր վտանգավոր հետևանքներով, փոփոխվում է կլիման: Վերջին տասնամյակներում ավելի հաճախացել են բնական արհավիրքները՝ ջրհեղեղները, փոթորիկները և այլն: Ձմեռներն ավելի տաք են ու սակավաձյուն, գարունն ավելի շուտ է սկսվում, չվող թռչունները մեր սպասածից ավելի շուտ են վերադառնում: Այս ամենը կլիմայի փոփոխության կամ «համամոլորակային տաքացման» նշաններն են:

Ջերմոցային գազերից հիմնականը երեքն են՝ ածխածնի երկօքսիդը, մեթանը և ազոտի երկօքսիդը: Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտում այդ գազերի քանակի ավելացումը փոփոխում է էներգիա կլանելու մթնոլորտի ունակությունը և բարձրացնում օդի ստորին շերտի ջերմաստիճանը:

Արդյունքում առաջանում է « ուժեղացված ջերմոցային էֆեկտ», ինչն էլ հանգեցնում է գլոբալ տաքացման, որի հետևանքն է հավերժական սառույցների հալվելը ,որն էլ իր հերթին ջրհեղեղների պատճառ կարող է լինել: Ցավով պետք է նշեմ այն փաստը, որ տարեկան կրճատվում է մեր մոլորակի բուսածածկի 1 տոկոսը: Այսօր խախտված է բնական համակեցությունների հավասարակշռությունը, ակնհայտ է ,որ այդ երևույթների հիմնական պատճառը մարդու տնտեսական գործունեությունն է: Հակիրճ ներկայացնեմ էկոլոգիական գլոբալ խնդիրները , որոնք վտանգում են ամբողջ մարդկությանը՝

1. Մթնոլորտի աղտոտումը , որի հետևանքներն են ջերմոցային էֆեկտը , կլիմայի համամոլորակային տաքացումը , օզոնային անցքերը , թթվային

տեղումները , սմոգը և այլն: Գլոբալ տաքացման հետևանք է հալվող սառցադաշտերը և ծովի մակարդակի բարձրացումը, որը սպառնալիք է ցածրադիր առափնյա շրջանների և փոքր կղզիների համար:Գլոբալ մասշտաբով ծովի մակարդակն անցյալ դարում արդեն բարձրացել է 10-20 սմ-ով:

2. Հողերի աղտոտումը , որի հետևանքներն են հողերի արագացված էրոզիան և անապատացումը:
3. Ջրերի աղտոտումը ,որի հետևանք են և համաշխարհային օվկիանոսի աղտոտումը հատկապես պլաստիկ շշերով և տոպրակներով , և քաղցրահամ ջրերի աղտոտում ,խմելու ջրերի որակի վատացումը: Ամբողջ աշխարհում խմելու ջուրը դարձել է սպառվող ռեսուրս:
4. Երկրագնդի անտառազրկումը:
5. Կենսաբազմազանության նվազումը՝ կենդանիների , բույսերի և սնկերի տեսակների ոչնչացումը:
6. Շրջակա միջավայրի աղտոտումը , ինչպես նաև ռադիոակտիվ աղտոտումը:

Մաս 2. Ինչ է բնության պահպանությունը: Միջազգային բնապահպանական պայմանագրեր

Բնության պահպանությունը պետական և հասարակական միջոցառումների համալիր է, որի նպատակն է պահպանել բնական հարստությունները, նպաստել դրանց վերարտադրմանը, ապահովել ռեսուրսների խելամիտ և արդյունավետ օգտագործումը, կանխել բնության վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցությունները աղտոտվածությունից, կենսաբազմազանության պահպանումը՝ բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծմամբ, բնության առանձին հուշարձանների պահպանումը: Բնության պահպանությունը համամոլորակային խնդիր է, անհրաժեշտ է դարձել տարբեր երկրների ջանքերի միավորումը և բնապահպանական միջազգային կազմակերպությունների ստեղծումը: Էկոլոգիական ճգնաժամի հարցերը անհրաժեշտ էր քննարկել միջազգային համաժողովներում, առանձին տարածաշրջանների և պետությունների մակարդակներում: 1971թ. ստեղծվեց ԵՕԷԿՕ-ին կից միջպետական մի կազմակերպություն (MAB- Man and the Biosphere), որն լուծում էր բազմաթիվ խնդիրներ, կապված կենսոլորտի կայունության հետ: Շրջակա միջավայրին նվիրված Ստոկհոլմի գիտաժողովը (1972թ.) և բնության և բնական ռեսուրսների պահպանման միջազգային միությունը (ԲՊՄՄ) ընդունեցին բնության պահպանության համաշխարհային ռազմավարությունը:

1982 թ. «Բնության պահպանության համաշխարհային խարտիան» հավանություն տվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 37-րդ նստաշրջանի որոշումը, որն

պարտավորեցնում էր մոլորակի և դրա հարստությունների պահպանումը բոլոր պետությունների կողմից:

Դրան հետևեց եղանակի փոփոխությանը նվիրված՝ 1985 թ. Վիլլախի գիտաժողովը ,որն ընդունեց մթնոլորտի աղտոտման հետևանքով եղանակի հետ կապված «ջերմոցային էֆեկտի» փաստը: Ավելի քան հարյուր երկրի ներկայացուցիչներ հավաքվեցին Մարոկկոյում՝ «Համամոլորակային ջերմացման մասին» ՄԱԿ-ի շրջանակային համաձայնագիրը լրացնելու համար: Երկրները համաձայնության եկան վնասակար արտանետումների ծավալները նվազեցնելու և դրանով Երկրագնդի համընդհանուր ջերմացումը դանդաղեցնելու ուղղությամբ:

2005 թ. փետրվարին ճապոնական Կիոտո քաղաքում 84 երկրների կողմից ստորագրվեց Կիոտոյի համաձայնագիրը, որի հիմնական նպատակը մթնոլորտ արտանետվող և «ջերմոցային էֆեկտ» հարուցող, հետևաբար Երկիրը գլոբալ տաքացմանը տանող գազերի կրճատումն սկսելն է:

Սկսեցին լույս ընծայել հիմնահարցը լուսաբանող պարբերականներ, դրան նվիրված աշխատություններ: Իրար հաջորդեցին համբավավոր գիտնականների՝ դրամատիկ սենսացիա առաջացնող ուսումնասիրությունների հրապարակումներ:

Այժմ ոչ միայն գիտնականները, այլև ամբողջ մարդկությունը գիտակցում է, որ կյանքը մեր մոլորակի վրա կշարունակվի կամ կդադարի մարդու իսկ մեղքով: Ներկայումս, բացի պետական բնապահպան կազմակերպություններից, ամբողջ աշխարհում ավելի մեծ թափ է առնում այսպես կոչված «կանաչների» հասարակական շարժումը, որը միավորում է տարբեր երկրներում բնության պահպանության, Երկրի ապագայի համար պայքարող հազարավոր մարդկանց:

Մարդկության ինքնքրծանման սպառնալիքից խուսափելու, մարդկային հանրության՝ կուլտուրաների երկխոսության վրա հիմնված նոր ապրելակերպ ու

մտածողություն կենսահաստատելու համար պահանջվում է բոլոր՝ մեծ թե փոքրաթիվ ժողովուրդների ինտելեկտուալ և տեխնիկական ներուժի, բանականության միատեղորմը:



Մաս 3. Էկոլոգիական իրավիճակը Հայաստանում: ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներ:

«Բնությունից դու ոչինչ չես իսլում, իսլում ես քեզ նմանից»,- ասում է հայկական ժողովրդական իմաստուն առածը: «Մի վիճեք բնության հետ, այլ օգնեք նրան»,- հորդորում է Նարեկացին: Իսկ նրանք, ովքեր խախտում են մարդու գոյության պայմանների հավասարակշռությունը, ձեռնամեղս վնաս հասցնում այդ պայմաններին, հայերի կողմից կարգվում են բարբարոսների շարքը:

Հաշվարկները ցույց են տվել, որ մթնոլորտում ածխաթթու գազի կրկնապատկման դեպքում Հայաստանում օդի միջին ջերմաստիճանը կբարձրանա երկու աստիճանով, տեղումները կկրճատվեն՝ մոտ տաս տոկոսով: Նկատվելու է կլիմայի չորացման աճ և անապատացման պրոցեսների արագացում: Սպասվում է գետերի տարեկան հոսքի նվազում 15 տոկոսով և Սևանա լճի մակերեսից գոլորշիացման ավելացում 13-14 տոկոսով: Սպասվում է նաև հողերի խոնավության նվազում 10-30 տոկոսով, արոտավայրերի ընդհանուր մակերեսի և դրանց բերքատվության կրճատում 4-10 տոկոսով և այլն:

Տազնապահարույց է Երևանի քաղաքային ազլումերացիայի գոտին, որտեղ բնակվում է հանրապետության բնակչության մեկ երրորդից ավելին, որտեղ նկատվում է հսկայածավալ ավտոտրանսպորտի կենտրոնացում: Արդյունաբերական ձեռնարկությունների կողմից բնական աղտոտման գոտիներ են մնում խիտ բնակեցված Վանաձորը, Ալավերդին, Հրազդանը, Արարտը և այլն: Այդ քաղաքների գոտիներին բնութագրական են հանքաարդյունահանումը, հանքաքարի մշակումը, ոչ հանքային հանածոների մեծածավալ արդյունահանումը, որոնք ուղեկցվում են

գյուղատնտեսական շրջանառությունից հողերի դուրսբերմամբ և էրոզիայով:
Նույնքան վատ վիճակում է օդային ավազանը:

Բարձրթողի վիճակում է քաղաքներում ու գյուղերում կենցաղային աղբի հավաքման, վերամշակման ու օգտագործման հարցը:

Էկոլոգիական «ինքնքսպանության» աղբյուր էր «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումում 40 տարի ի վեր գործող պայթյունավտանգ արտադրությունը՝ անթույլատրելիորեն մեծ քանակությամբ վնասակար արտանետումներով ու չմաքրվող կեղտաջրերով:

Էներգետիկայի ու ռոռզման նպատակներով Սևանա լճի անխելամիտ օգտագործման, ինչպես նաև՝ լճի ջրահավաք ավազանում մաքրման համակարգի բացակայության պատճառով հիմնավորապես խախտվել է լճի և շրջակայքի բնապահպանական հավասարակշռությունը: Դրան զուգընթաց և որպես հետևանք՝ խիստ նվազել է ձկնային պաշարը, խաթարվել ջրլող թռչունների վերարտադրության բնական ընթացքը:

Հայաստանի տարածքը բնութագրվում է նվազ անտառածածկությամբ, իսկ պահպանվող մակերեսն էլ ավելի է նվազել:

Այս ամենը հիմք է դարձել միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանը ևս դիտելու որպես վտանգված տարածաշրջան: Հայաստանում բնության և շրջակա միջավայրի պահպանությամբ զբաղվում են տարբեր գերատեսչություններ, ինստիտուտներ, կազմակերպություններ, միություններ և այլն: Միայն բնապահպանական հասարակական կազմակերպությունների թիվը քառասունի է հասնում: 2001թ. մարտին ԵԱՀԿ (Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանյան գրասենյակ) առաքելության և ՀՀ Բնապահպանության նախարարության միջև ստորագրված Հուշագրի շրջանակներում Երևանում, առաջինը ԱՊՀ տարածքում ստեղծվեց

բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոն, որը հայտնի է որպես « Օրհուս կենտրոն»։ Այստեղ տեղի են ունենում բնապահպանական արդիական հարցերի քննարկումներ, տարբեր միջոցառումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, բանավեճեր, հասարակական լսումներ, շնորհանդեսներ, մամլո ասուլիսներ։ Այսպիսով Հայաստանի հասարակայնությունը, ինչպես բնապահպանական տեղեկատվության մատչելիության , այնպես էլ կարևոր որոշումների մշակման և ընդունման գործընթացին ակտիվ մասնակցելու հնարավորություն ստացավ։ Կենտրոնում հասարակայնությանը անվճար տրամադրվում է բնապահպանական ինչպես էլեկտրոնային , այնպես էլ պատճենահանված տեղեկատվություն։ Բարձր դասարանի սաների համար հրաշալի հնարավորություն է ստանալ « Օրհուս կենտրոնում » էկոլոգիական թարմ տեղեկություններ, մասնակցել բազմաբնույթ միջոցառումներին և ստացված տեղեկությունները բերել դպրոց և ընտանիք։

Բնապահպանական նպատակներով ՀՀ-ում ստեղծվել են բնության հատուկ պահպանվող տարածքներ, որոնք կարող են ունենալ չորս կարգավիճակ՝

Պետական արգելոցներ

Ազգային պարկեր

Արգելավայրեր

Բնության հուշարձաններ

Դրանք միմիանցից տարբերվում են պահպանության ռեժիմով։

Պետական արգելոցները Հայաստանում երեքն են՝ «Էրեբունի» 89 հա տարածքով, «Խոսրովի անտառ» 29 000 հա տարածքով և «Շիկահողի» 10 000 հա տարածքով։ Հանրապետության երեք արգելոցներից տարածքի առումով ամենափոքրը՝ «Էրեբունի» արգելոցը , թերևս ամենակարևորն է իր նշանակությամբ, որպես

մարդկության հանապազօրյա հացի «գենետիկական ֆոնդի» պաշարատեղ: Արգելոցը հիմնադրվել է 1981թ. վայրի հացազգիների՝ ցորենի, գարու, աշորայի, այծակնի՝ աշխարհում եզակի գենոֆոնդը պահպանելու համար, որով պայմանավորված է արգելոցի համաշխարհային նշանակությունը:

«Խոսրովի անտառ» արգելոցը հիմնադրվել է 1958 թ., այստեղ տարածված են 1800 տեսակ ծաղկավոր բույսեր, 1000-ից ավելի բզեզների տեսակներ, կաթնասունների մոտ 50 տեսակներ, թռչնաշխարհի մոտ 130 տեսակ:

«Շիկահողի » արգելոցը հիմնադրվել է 1958 թ. և գտնվում է Սյունիքի մարզում: Ակսել Բակունցի նկարագրած Մթնաձորը զբաղեցնում է արգելոցի տարածքի գրեթե կեսը:

ՀՀ ազգային պարկերն երկուսն են՝ «Սևան» և «Դիլիջան», իսկ 23-ը՝ արգելավայրեր են, որոնցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Մոսու պուրակ», «Ախնաբաթի կենու», «Արջատիլենու», «Որդան կարմիր» և այլն: Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների մակերեսը կազմում է հանրապետության տարածքի մոտ 10 տոկոսը: Բնապահպանական նպատակներով ստեղծված այս տարածքներից բացի, Հայաստանում կան նաև պահպանության արժանի բազմաթիվ այլ յուրահատուկ տարածքներ, որտեղ կապահովվի յուրօրինակ լանդշաֆտների և կենսաբանական բազմազանության պահպանությունը, վերարտադրությունը և կայուն զարգացումը:

Մաս 4 .Սևանա լճի հիմնահարցը

Սևանը Հայաստանի Հանրապետության ամենամեծ լիճն է, միննույն ժամանակ աշխարհի ամենամեծ քաղցրահամ բարձրալեռնային լճերից մեկը: Այն գտնվում է հանրապետության կենտրոնական մասում ծովի մակարդակից 1900 մ բարձրության վրա և շրջապատված է գրեթե 400 կմ երկարությամբ ձգվող լեռնաշղթաներով: Լճի ավազանի ընդհանուր ծավալը 38,8 մլրդ մ խորանարդ է, իսկ մինչև 1980 թ. այն կազմում էր 58,5 մլրդ մ խորանարդ: Լիճ են թափվում նրա ջրահավաք ավազանում առաջացող 28 գետեր, և միայն Հրազդան գետն է սկիզբ առնում Սևանից:

Մինչև 20-րդ դարի առաջին կեսերը լիճն ուներ հավասարակշռված էկոհամակարգ՝ մակարդակի բնական և ոչ մեծ տատանումներով: Այդ շրջանում էլ Սևանը դարձավ մեր աղքատ երկրի լույսի և ոռոգման միակ աղբյուրը: Հանրապետության էներգետիկ պահանջների բավարարմանը միտված վեց հսկա էլեկտրակայանների կառուցման, ոռոգվող հողատարածքների ընդլայնման և ջրապահովման հիմնախնդիրների լուծման նպատակներով 30-ական թթ-ից սկիզբ դրվեց լճի դարավոր ջրային պաշարների օգտագործմանը:

Սևանա լճի պաշարների օգտագործումը մի կողմից մեծ դեր ունեցավ հանրապետության գյուղատնտեսության, արդյունաբերության և առհասարակ ժողովրդական տնտեսության զարգացման մեջ: Մյուս կողմից ջրի անխնա օգտագործումը լճի մակարդակի նվազման պատճառ դարձավ, այն իջել է 19,6 մ-ով:

Անցած տասնամյակների ընթացքում Սևանի էկոլոգիական պատկերը հետընթաց է ապրել նաև հետևյալ գործոնների ազդեցությամբ՝

Ջրի մակարդակի նվազում

Շրջապատի բնակավայրերի կեղտաջրերի ներհոսք լիճ

Մննդարար տարրերի ներհոսք

Մարդու գործունեության վասակար ազդեցությունը լճի կենսաբազմազանության վրա:

Սևանի խորության և ջրի ծավալի փոքրացման արդյունքում խախտվեց լճի էկոլոգիական հավասարակշռությունը, ջերմային ռեժիմը, մի քանի անգամ պակասեց թթվածնի պարունակությունը ջրում, ստեղծելով անբարենպաստ պայմաններ էնդեմիկ ձկնատեսակների՝ մասնավորապես իշխանի երկու ենթատեսակների բազմացման համար: Հետևանքն այն եղավ, որ ձվադրավայրերի չորացման արդյունքում դադարեց այդ ձկնատեսակների բնական վերարտադրությունը:

Նույն ճակատագիրն է սպասում մյուս երկու ենթատեսակներին՝ ամառային իշխանին և գեղարքունուն, քանի որ թափ առած ձկնագողության, ձվադրավայրեր հանդիսացող գետերի ջրօգտագործման և աղտոտվածության պատճառով լճում դրանց քանակությունը չափազանց նվազել է:

Նույն պատճառով արագ տեմպերով պակասում է նաև Սևանի կողակի և բեղլուի քանակը: Սևանի ավազանի ջրաճահճային տարածքներում բնադրող 167 թռչնատեսակներից մնացել է մի երկու- երեք տասնյակ: Սևանի ավազանի կենսաբազմազանությանը զգալի վնաս հասցրեց Սևանա լճից ոչ հեռու գտնվող Գիլլի լճի չորացումը ,որն իրականացվեց 1959 թ. Խորհրդային Միությունում ծավալված, այսպես կոչված « Խամ և և խոպան հողերի յուրացման» շրջանում: Դրա տխուր հեևանքները հայտնի են՝ հացահատիկի և այլ կուլտուրոնների սպասված առատ բերք այդպես էլ չեղավ: Դեռ ավելին, Գիլլին շրջապատող արոտավայրերի և խոտհարքների բերքատվությունը շեշտակի նվազեց, չորացան լիճը շրջապատող աղբյուրները: Այսպիսով, մենք կորցրեցինք բնության գողտրիկ մի անկյուն, որն իր գոյությամբ կարևոր նշանակություն ուներ չվող ջրաճահճային մոտ 100 տեսակ թռչունների բնադրման, ինչպես նաև Սևանի ձկների կողակի և բեղլուի ձվադրման համար: Այս տխուր իրողության հենքի վրա հուսադրող մի հեռանկար կա՝ հատուկ որոշում է կայացվել վերականգնել Գիլլի լիճը:

Սևանի հիմնախնդիրը փորձում են լուծել տարբեր միջոցներով:

Լճի մակարդակը բարձրացնելու նպատակով կառուցվեց Արփա-Սևան թունելը, որի երկարությունը շուրջ 50 կմ է, յուրաքանչյուր տարի Սևան է լցվում 250- 270 մ խորանարդ ջուր: Կառուցվեց նաև Որոտան –Արփա նոր թունելը 23 կմ երկարությամբ: Դա հնարավորություն կտա ոչ միայն կանխել Լճի մակարդակի իջեցումը, այլ նաև հույս ունենք, որ այն կբարձրանա առնվազն 6 մ-ով: Սա պատահական թիվ չէ: Մասնագետների կողմից այն հիմնավորված է որպես էկոլոգիական հավասարակշռությունը վերականգնելու համար անհրաժեշտ սկզբնական քայլ:

Այս ուղղությամբ հաջորդ արված քայլը 1978թ. « Սևան» ազգային պարկի ստեղծումն էր, որը զբաղեցնում է 150 100 հա տարածք և ընդգրկում է Սևանա Լճի ջրային մակերեսն ու դրան հարող ջրից ազատված ափամերձ գրունտները: Պահպանական գոտին ներառում է նաև Սևանա լիճը երիզող լեռնաշղթաների լանջերը: Ազգային պարկը հիմնադրվել է Սևանա Լճի քաղցրահամ խմելու ջրի, ձկնային պաարների, բնության և պատմաճարտարապետական համալիրների պահպանության , ինչպես նաև հանգստի և տուրիզմի կազմակերպման նպատակով:

Սևանի զարն է արձաթափայլ թեփուկներով, կարմրավուն համեղ մսով Սևանի էնդեմ իշխանը իր չորս ենթատեսակներով՝ գեղարքունի, ձմեռային իշխան, ամառային իշխան, բոջակ:

Տնտեսական նշանակություն ունի Սևանի սիգր ,որը 1920-ական թթ. Լադոգա և Չուղ լճերից վերաբնակեցված սիգերի հիբրիդն է: Իշխանը և Սևանի բեղլուն գրանցված են Հայաստանի «Կարմիր գրքում»: Կենդանական աշխարհի ամենահարուստ խումբը թռչնաշխարհն է, որն ունի 267 տեսակ:

Համաշխարհային քանկի աջակցությամբ մշակվել է Լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ծրագիր:

Բնապահպանության նախարարության ջանքերի արդյունքում մշտապես պակասեցվում է լճից ոռոգման համար նախատեսված ջրի բացթողումների ծավալը:

2001 թ. ընդունվել է « Սևանա լճի մասին » ՀՀ օրենքը, որը նպատակաուղղված է լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման կանոնակարգմանը:

Սակայն միշտ պետք է հիշել, որ միայն օրենքներով ու որոշումներով չէ ,որ կարելի է լուծել Սեանի խնդիրը, դրա համար համաժողովրդական հոգածություն է անհրաժեշտ: Մենք պարտավոր ենք հատուցել Սևանին հոգատար վերաբերմունքով, սրտացավորեն պահպանելով բնության այս չքնադագույն վայրը և, իհարկե, չկրկնել անցյալի սխալները:



Մաս 5. Էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը

Ինչ է հարկավոր անել ճգնաժամային սահմանագծին հայտնված Երկիր մոլորակը փորձություններից զերծ պահելու, իրեն սպառնացող վտանգների առաջն առնելու համար: Ըստ ինձ, ամենա առաջին քայլը դա անհատի էկոլոգիական դաստիարակությունն է և կրթությունն է: Էկոլոգիական դաստիարակության և կրթության հիմնախնդիրն առաջարկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից, արտացոլվել է ՄԱԿ-ի շրջակա միջավայրի պահպանման ազդեցիկ ծրագրում: Էկոլոգիական դաստիարակության ու կրթության կարևոր միջոց է ուսումնական հաստատություններում և արտաուսումնական համալիր միջուցառումների անցկացումը բուսական և կենդանական աշխարհի, օդային ,ջրային ավազանների պահպանության գործում: Արդեն ձևավորվում է էկոլոգիական մանկավարժություն գիտաճյուղը: Անձի էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը պետք է ընդհանուր կրթության ու լուսավորության մասը դառնա: Պահանջվում է հսկայածավալ աշխատանք, որը հնարավոր է միայն ամբողջ ժողովրդի բնապահպանական կուլտուրայի ձևավոմամբ:

Կրթության և դաստիարակության ռազմավարական նպատակ պետք է լինի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը, որի հիմքում ընկած են էկոլոգիական գիտելիքները, կուլտուրան ու էթիկան: Եթե մարդու գիտելիքները հոգևոր-բարոյական հիմքի վրա չեն խարսխվում, ապա դրանք կամ մեռյալ բեռ են, կամ էլ կարող են ավերող ուժ դառնալ: Նշանակում է՝ ընտանիքում , նախադպրոցական հիմնարկներում հարկավոր է երեխաների մեջ սեր սերմանել բնության հանդեպ, իսկ դպրոցում ուսումնասիրվող բոլոր առարկաները անխտիր պետք է ներթափանցված լինեն էկոլոգիական գիտելիքներով:

Էկոլոգիական կուլտուրան ձեռք է բերվում համապատասխան դաստիարակության ու կրթության շնորհիվ: Կրթության ու դաստիարակության էկոլոգացումը պետք է ընդգրկի տարիքային բոլոր շերտերը, մասնագիտությունից, աշխատանքի բնույթից ու բնակության վայրից անկախ, լինի անընդմեջ:

Էկոլոգիական դաստիարակությունն ու կրթությունը կոչված են ամրակայելու մարդկանց վարքի ու գործելակերպի հետևյալ ուղիները՝

- բնական ռեսուրսների խնայողություն
- շրջակա միջավայրի անմիտ կամ չարամիտ աղտոտման կանխում
- բնական էկոհամակարգերի պահպանում
- բնության հետ փոխհարաբերության հարցերում միջազգային հանրության կողմից ընդունված վարվելակերպի նորմերի հարգանք
- բնապահպանական ձեռնարկումների կենսագործման անձնական ակտիվ մասնակցություն
- համապետական բնապահպանական միջոցառումներին ու միասնական էկոլոգիական քաղաքականությանն օժանդակելու պատրաստականություն
- բնօգտագործման միասնական կանոնների կատարում:

Հայաստանում էկոլոգիական կրթությունը արդեն դարձել է հանրապետության կրթական համակարգի բաղկացուցիչ մաս: Այն այս կամ այլ չափով արտահայտված է կրթական համակարգի բոլոր աստիճաններում: Էկոլոգիական կրթության օրենսդրական հիմքերն ամրագրված են « Կրթության մասին» (1999 թ.) և « Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» (2001 թ.) ՀՀ օրենսգրքով: Ենթաօրենսդրական նորմատիվային ոլորտը լրացվում է « Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքի համաձայն անընդհատ էկոլոգիական կրթությունը ընդգրկում է հետևյալ վեց մակարդակները՝

- նախադպրոցական
- հանրակրթական
- միջին մասնագիտական
- բարձրագույն մասնագիտական
- հետբուհական
- հասարակության լայն խավերի, այդ թվում զինված ուժերի էկոլոգիական դաստիարակություն և կրթություն:

Հանրակրթական դպրոցը էկոլոգիական կրթության կարևորագույն օղակն է: Հանրապետության ավելի քան 1200 դպրոցներում այն իրականացվում է բնագիտական առարկաների բազայի վրա: Կառավարության 2000 թ. թիվ 226 որոշման համաձայն միջնակարգ ընդհանուր կրթության չափորոշիչը նախատեսում է նոր ուսումնական առարկաներ 9-րդ դասարանի համար՝ «էկոլոգիական դաստիարակություն», « Բնօգտագործման բնապահպանության հիմունքներ» և այլն: էկոլոգիական դաստիարակության կարևոր մասն է կազմում կենսաբանության, բնագիտության, աշխարհագրության ժամերի պարտադիր ծրագրային նյութերը: Օրինակ 9-րդ դասարանում կենսաբանությունից անցնում ենք երկու գլուխ «էկոլոգիայի հիմունքները» և « Բնության պահպանություն» , որոնց հատկացված է 15 ժամ, 7-րդ դասարանում՝ « Հայաստանի բուսականությունը», որում նշված են Հայաստանի Կարմիր գրքի բույսերը, 5-րդ դասարանում բնագիտությունից անցնում ենք « Ջրոլորտի պահպանությունը», « Երկրի մակերևույթի և ցամաքի պահպանությունը», 6-րդ դասարանում « Քիմիական նյութերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա» և այլն: Այս դասերի ընթացքում ձևավորվում է սովորողների էկոլոգիական գիտակցությունը: Գենետիկայի ժամերին պետք է ծանոթացնել սովորողներին որոնք են ԳՄՕ (գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմներ) պարունակող մթերքները և դրանց վնասակար ազդեցությունը մարդու առողջության վրա:

Բացի դասերից սովորողների մոտ էկոլոգիական գիտակցություն է ձևավորվում աշխատանքը « Պատանի բնասերների» խմբակներում, բնապահպանական տարբեր միջոցառումների ժամանակ, օրինակ « Թռչնի տոն», «Ծաղկի տոն», «Երկիր մոլորակը բոլորինն է, պահպանեք այն անաղարտ», « Աղբը որպես երկրորդային հումք», «Հայաստանի պահպանվող տարածքները», « Սևանի հիմնախնդիրը», էքսկուրսիաները «Բնության թանգարան», « Դիլիջան», « Սևան» ազգային պարկ, մասնակցություն « Օրհուս կենտրոնի» աշխատանքներին, էկոտուրերին, ծառատնկերին և այլն: Ալբերտ Շվեյցերը ասել է՝ «Էթիկան անսահման պատասխանատվություն է բոլոր կենդանի էակների նկատմամբ»: Էկոլոգիական դաստիարակության ընթացքում կարևոր է դաստիարակել և ձևավորել մարդու մոտ էկոլոգիական էթիկա, խղճի և օրինավորության դաստիարակում, ինչն ազգի կուլտուրայի հիմքն է:



Եզրակացություններ

Ավարտելով հետազոտական աշխատանքը, հանգեցի հետևյալ եզրահանգմանը՝

1. Բնապահպանական դժվարին խնդիրները լուծելու համար պետք է միավորվեն բոլոր երկրների և կազմակերպությունների ջանքերը:
2. Հասկանալով էկոլոգիական աղետի վտանգավորությունը և լրջությունը, պետք է գործել միասնական, անկախ պետության հզորությունից և զբաղեցրած տարածքից:
3. Հնարավոր է փոխել մարդու սպառողի մտածելակերպը, եթե փոխվի պետական մակարդակներով արժեքային համակարգը՝ որպես առաջնային առժևորվի բնությունը, նրա մաքրությունը, էկոհամակարգերի հավասարակշռությունը, մարդկային կյանքը, առողջությունը, որից հետո արժևորվի տնտեսական շահը:
4. Մարդու սպառողի մտածելակերպը կփոխվի, այո եթե ձևավորենք յուրաքանչյուր մարդու մոտ էկոլոգիական էթիկա և կուլտուրա:
5. Փոխելով մտածելակերպը, անշուշտ, կթոխվի նաև մարդկանց, երկրների, բոլոր ազգերի, ամբողջ Երկրագնդի սպառողի գործելակերպը:
6. Ուղիները, որոնք կարգելակեն առկա կործանարար միտումները կան՝ դրանք են փոխօգնությունը, փոխըմբռնումը, բնության շահերի գերակայությունը տնտեսական շահերի նկատմամբ:
Այս ամենը իրականացնելը չափազանց դժվար է, սակայն հույսս չկորցնելով կասեմ, որ հնարավոր է:

Օգտագործված գրականության ցանկ՝

Ո. Մարուխյան, Ա. Հովսեփյան «Էկոլոգիական դաստիարակություն»(2007 թ.)

«Հայոց բնապահպանական մշակույթի արմատները»(2007 թ.)

«Հայաստանի էկոլոգիական իրավիճակը» (2007 թ.)

« Էկոլոգիական էթիկա» (2007 թ.)

Ա. Համբարձումյան « Մեզ շրջապատող միջավայրը և Օրհուսի կոնվենցիան»
(2005 թ.)

«Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներ» (2005 թ.)

Ա. Համբարձումյան, Ի. Ջարաֆյան « Սևանա լճի հիմնահարցը» (2005 թ.)

Ջ. Առուստամյան, Դ. Հարությունյան «Ինչպես ենք հասկանում կլիմայի
փոփոխությունը» (2007 թ.)

Հայաստանի կենսաբազմազանության «Երրորդ Ազգային Ձեկույցի» նյութերից
(2006 թ.)

«Բնագետ» ամսագրի հ. 3-4 (2001 թ.)